

3.

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ VIRTUE ETHICS

Հարց տալէ առաջ թէ ի՞նչ է **առաքինութեան բարոյագիտութիւնը** հարկ է նախ անդրադառնալ **Առաքինութիւն** եզրին, որպէս հասկացութիւն, որ իր իւրայատուկ տեղը ունի նաեւ աստուածաբանութեան ծիրէն ներս:

Առաքինութիւն⁽⁷³⁾ (յուն.՝ aretê, լատ.՝ virtus, անգլ.՝ Virtue, գերմ.՝ Tugend), բարոյական դրական յատկանիշ, **բարի** նկարագիր ու բարոյական արժէք է: **Առաքինութիւնը**, որպէս հասկացութիւն որոշ չափով մանրամասնուած է, «Բարոյագիտութեան Հիմնական Հասկացութիւններ» Մաս – 9ի մէջ, յատուկ յօդուածով. այնտեղ նոյնպէս յիշուած է առաքինութեան հականիշ՝ **մոլութիւնը** (յուն.՝ kakia, լատ.՝ Vitium, անգլ.՝ Vice, գերմ.՝ Laster):

Իսկ **Առաքինութեան բարոյագիտութիւնը** (անգլ.՝ Virtue Ethics, գերմ.՝ Tugend-ethik) բարոյագիտական տեսութիւն մըն է, որու հիմնական հասկացութիւնը մարդկային առաքինութիւնն է: Հնադարեան յոյն փիլիսոփաներու (ինչպէս Սոկրատէս) երբ կը հարցունէր, թէ այս աշխարհի վրայ «ինչպէ՞ս պետք է ապրիլ» պատասխանը շատ յստակ էր՝«առաքինի», նպատակ ունենալով մարդու երջանկութիւնը:

Առաքինութեան բարոյագիտութեան նախնական գաղափարները թէեւ կարելի է նախասոկրատէան փիլիսոփաներու մօտ գտնել, սակայն անոր զարգացումը կը սկսի յոյն դասական փիլիսոփաներ՝ **Պլատոնով** (յուն.՝ Plátōn, 427 – 347 մ.թ.ա.) եւ անոր աշակերտած **Արիստոտէլով** (յուն.՝ Aristotélēs, 384 – 322 մ.թ.ա.):

Պլատոն կը հաստատէ չորս գլխաւոր առաքինութիւնները.- **իմաստութիւն, արիութիւն, չափաւորութիւն եւ արդարութիւն**: Ապա Արիստոտէլ կու գայ առաքինութիւնները բաժնել երկու խումբերու.-

- **Առաջին՝ տեսական (կամ տրամաբանական) առաքինութիւններ**, ինչպէս՝ բանականութիւն, գիտութիւն, իմաստութիւն, արուեստ, ըմբռնում կամ հասկացողութիւն. եւ
- **Երկրորդ՝ բարոյական (կամ նկարագրի) առաքինութիւններ**, ինչպէս՝ խոհեմութիւն, արիութիւն, արդարութիւն, առատաձեռնութիւն, վեհանձնութիւն, բարեկամութիւն, ճշմարտացիութիւն, սիրալիրութիւն, ներողամտութիւն եւ ճարտարութիւն:

Արիստոտէլի բարոյագիտութիւնը, անելի մանրամասն, պիտի ներկայացուի հետագային (տե՛ս Էջ 196):

(73) **Առաքինութիւն** (Virtue) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 389: